ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 198

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Հայկաշեն բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքը (Հայկաշեն բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-056-0334-0002 կադաստրային ծածկագրով 0.71337 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	04-056-0334-0002 կադաստրային ծածկագրով 0.71337 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրվող հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Միաժամանակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է, որ հողամասի շրջադարձային կետերի կոորդինատներով (տրված ARM WGS-84 համակարգով) սահմանափակված տարածքը ծանրաբեռնված է «ՖՐՍ

ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊ ընկերությանը (նախկին՝ «ԱՐԽԻՏՐԱՎ» ՍՊԸ) տրված թիվ 501 ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասերով:

4. ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Հայկաշեն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «15» « սեպտեմբերի » 2022թ.